

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման աշխատանքների կատարման)			[2] Մերիա	[3] Համար
10	Հոկտեմբեր	2019 թ.				Բ	3304463051
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
8	Հոկտեմբեր	2019 թ.				Մերիա	Համար
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ			[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							
[7.1] ՀԴՄ կտրոնի համար							

Մատայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ			N 1570015111280200				
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յոդ միկ շք. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Մատայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին.նախ.աշխ.գործ.վարչ			N 900011180081				
[18] Գտնվելու վայրը (ընկալության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Մատայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթացի գումարի հաշվարկը						
№№ Շ/Գ	Մատայությունների (աշխատանքների) անվանումը (ըրվանդակայությունը)	Չափի միավորը	Շտապումը ծավալը կամ ժամանակը րջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	2500		10000
2	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	11	2500		27500
3	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.33	7000		9310
4	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	2500		10000
5	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	8	2250		18000
6	Գերմաներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	2500		5000
7	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	2250		9000
8	Հայերեն-ուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	24	1200		28800
9	Հայերեն-հնդկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	12	4400		52800
Ընդամենը						170410

Մատայություն մատուցող (աշխատանք կատարող)
STEPANYAN HMAYAK 2301850293
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Մատայություն (աշխատանք) ստացող
GRIGORYAN SUSANNA 7403690397
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«13» սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանս, ուսումնասիրելով ԱՐԳԱՄ ԵՐՋԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 26100808 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ ԱՐԳԱՄ ԵՐՋԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԸ վերցվել է էքստրադիցիոն կալանքի տակ Ֆրանսիայի Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչությունից ստացվել են Ա.Ե. ՍԻՄՈՆՅԱՆԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ֆրանսերեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզու համարվող ֆրանսերեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմինն հասցեագրված՝ Ա.Ե. ՍԻՄՈՆՅԱՆԻ հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել ֆրանսերեն, իսկ Ալինա Խաչատրյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառնություններ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի
Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԱՐԳԱՄ ԵՐՋԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ հանձնման հարցման ֆրանսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ալինա Խաչատրյանին («Քաղաքացու անձնագիր AN0696778, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի AD №041130 դիպլոմ) և նրան պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:


«Հ գլխավոր դատախազի տեղակալ



Դ.Մելքոնյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«13.....».....09..... 2019թ.

Ա.Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

19.09.2019թ.

ք. Սիսիան

Սյունիքի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գ.Ա.Մինասյանս, ուսումնասիրելով ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունից ստացված թիվ 51154419 քրեական գործով Ֆրեդերիկ Ալֆրեդի Դավլաթի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննված թիվ 51154419 քրեական գործն ըստ մեղադրանքի Ֆրեդերիկ Ալֆրեդի Դավլաթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի դատախազություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի փորապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չփորապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Ֆրեդերիկ Ալֆրեդի Դավլաթը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ֆրանսերեն լեզվին, ուստի մեղադրական եզրակացությունը, այն հաստատելու մասին որոշումը և ուղեկցական գրությունը մեղադրյալին հասկանալի լեզվով հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից ֆրանսերեն գրավոր թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Ալինա Վարդանի Խաչատրյանին (ծնված 29.07.1984թ., բնակվում է ք.Մասիս, Նոր թաղամաս 15/2 շենք, 10 բն., ավարտել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ֆրանսերեն լեզվի թարգմանչի որակավորմամբ, անձնագիր AN 0696778, տրված 01.11.2013թ., 044-ի կողմից):

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Ալինա Խաչատրյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-

72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Ֆրեդերիկ Ալֆրեդի Դավլաթի վերաբերյալ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 51154419 քրեական գործով մեղադրական եզրակացության և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը ֆրանսերեն գրավոր թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Ալինա Վարդանի Խաչատրյանին (ծնված 29.07.1984թ., բնակվում է ք.Մասիս, Նոր թաղամաս 15/2 շենք, 10 բն., ավարտել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ֆրանսերեն լեզվի թարգմանչի որակավորմամբ, անձնագիր AN 0696778, տրված 01.11.2013թ., 044-ի կողմից):

Ալինա Խաչատրյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Ալինա Խաչատրյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Սյունիքի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական

Գ.Ա.Մինասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ

Ալինա Խաչատրյան

« 19 » 09 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

20 սեպտեմբերի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմինների կողմից ԻԻՀ «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար միջազգային մակարդակով հետախուզվող ԻԻՀ քաղաքացի **ՄԱՋԻԴ ՄՈՒՀԱՄՄԱԴՀՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆԻ** նկատմամբ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության «Ձվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից 2019 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 06¹⁵-ին, հայտնաբերվել, ապա ժամը 08⁵⁰-ին ձերբակալվել է և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ է տեղափոխվել Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավասու մարմինների կողմից ԻԻՀ «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար միջազգային մակարդակով Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող **ՄԱՋԻԴ ՄՈՒՀԱՄՄԱԴՀՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆ** (**MAJID MOHAMMADHOSSEIN HABIBI ARAGHI**, ծնված՝ 27.08.1983թ., ԻԻՀ քաղաքացի):

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 27.04.2019թ. որոշմամբ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆԻ նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 24.05.2019 թ. որոշմամբ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆԻ նկատմամբ կիրառվել է հանձնման համար կալանավորում, այնուհետև 23.07.2019թ. որոշմամբ՝ հանձնման համար կալանավորման ժամկետը երկարաձգվել է 2 (երկու) ամիս ժամկետով:


Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է ժամանակ, Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆԻ՝ ՀՀ-ում իրավական կարգավիճակը հստակեցնելու, հանձնման մասին միջնորդությունը քննարկելու և ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշում կայացնելու համար, 2019 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱԴԻՆԻ հանձնման համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:


Հաշվի առնելով, որ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՄԱԶԻԴ ՄՈՒՀԱՄՄԱԴՔՈՍՍԵՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ հանձնելու համար կալանավորելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդության պարսկերեն բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, Երևանի պետական համալսարանի կողմից տրված դիպլոմ՝ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական  Ա. Կոստանոյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  «...26».....09..... 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«20» սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանս, ուսումնասիրելով ԱՐԹՈՒՐ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 57104019 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ամենայն հավանականությամբ բնակվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչությունից ստացվել են Ա.Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ գերմաներեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն գերմաներեն կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով կատարված թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության հասցեագրված՝ Ա.Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել գերմաներեն, իսկ Սաթենիկ Հայթյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԱՐԹՈՒՐ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման հարցման գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սաթենիկ Հայթյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր BA 0387407, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի պետական համալսարանի Ա N 003927 դիպլոմ) և նրան պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ



Դ.Մելքոնյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Ս.Հայթյան



«20» 09 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24.09.2019թ.

ք. Երևան

«Վ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Հ. Գ. Ենոքյանս, ուսումնասիրելով Բեհֆառ Ամիրիլեմրասկի Մոհամմադհասանիի վերաբերյալ «Վ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104319 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

«Վ ՊԵԿ քննչական վարչությունում քննված թիվ 84104119 քրեական գործն ըստ մեղադրանքի Բեհֆառ Ամիրիլեմրասկի Մոհամմադհասանիի՝ «Վ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 355-րդ հոդվածի 1-ին մասով, 2019 թվականի սեպտեմբերի 24-ին մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչություն:

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Բեհֆառ Ամիրիլեմրասկի Մոհամմադհասանիին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել

«ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AK 0552856, տրված՝ 08.07.2010թ. 029-ի կողմից, դիպլոմ N PB 013781՝ տրված 05.07.1990թ.):

Հրանուշ Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Բեհֆառ Ամիրիլեմրասկի Մոհամմադհասանիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104319 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AK 0552856, տրված՝ 08.07.2010թ. 029-ի կողմից, դիպլոմ N PB 013781՝ տրված 05.07.1990թ.):

Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ



Հ. Գ. Ենոքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Հրանուշ Թախմասյան

«24» 09 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24.09.2019թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №44105116 քրեական գործով հետախուզվող ԳՐԻՇԱ ԱՐԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 10.10.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №44105116 քրեական գործով հետախուզվող ԳՐԻՇԱ ԱՐԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Շեղազայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Գ.Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ), որոնք տրամադրվել են:

23.09.2019թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԳԴՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի պատճենը՝ Գրիշա Հակոբյանի հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 2 էջից բաղկացած փաստաթուղթ՝ գերմաներեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված՝ Գ.Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախագգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դարախազ

Ա. Խաչատրյան

Մրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարրականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախարեալված պարասխանարվության մասին նախագգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅԹՅԱՆ

Ա. Խաչատրյան

«24».....09..... 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

24 սեպտեմբերի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմինների կողմից ԻԻՀ «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար միջազգային մակարդակով հետախուզվող ԻԻՀ քաղաքացի ՄԱՋԻԴ ՄՈՀԱՄՄԱԴՀՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասությանի դատարանի 2019 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԴ/0290/06/19 որոշումը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից 2019 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 06¹⁵-ին, հայտնաբերվել, ապա ժամը 08⁵⁰-ին ձերբակալվել է և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ է տեղափոխվել Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավասու մարմինների կողմից ԻԻՀ «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար միջազգային մակարդակով Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող ՄԱՋԻԴ ՄՈՀԱՄՄԱԴՀՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ (MAJID MOHAMMADHOSSEIN HABIBI ARAGHI, ծնված՝ 27.08.1983թ., ԻԻՀ քաղաքացի):

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 27.04.2019թ. որոշմամբ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 24.05.2019թ. որոշմամբ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ նկատմամբ կիրառվել է հանձնելու համար կալանավորում՝ 2 ամիս ժամկետով:

Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ հանձնելու համար կալանավորելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 12-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասությանի դատարանի 2019 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԴ/0290/06/19 որոշմամբ բավարարվել է ՄԱՋԻԴ ՄՈՒԱՄՄԱԴԿՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին միջնորդությունը:


Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Մ.Մ.ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է; իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասությանի դատարանի 2019 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԴ/0290/06/19 որոշումը ՄԱՋԻԴ ՄՈՒԱՄՄԱԴԿՈՍՍԵԻՆ ՀԱԲԻԲԻ ԱՐԱՂԻՆ հասու լեզվով հանձնելու համար որպես պարսկերեն գրավոր թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, Երևանի պետական համալսարանի կողմից տրված դիպլոմ՝ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական


Ա. Կոստանդյան

Սկսած սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ

իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանաբանության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«24» 09 2019թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԱԲԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ շՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ

056, ք. Երևան, Բողոյան փ. 1,
 Հեռ. 63 14 22,

Հ. 150-19
 «25» 09 2019 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման հրավիրելու մասին

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, առաջին դասի խորհրդական Մ. Ա. Արամյանս.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2019 թվականի հունիսի 5-ին՝ ժամը 18.47-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում է ստացվել ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին այն մասին, որ իրենց է զանգահարել Արսեն Մկրտչյանը և հայտնել, որ իրեն անձանոթ անձը Թաթուլ Կրպեյանի անվան այգում իր վրա է հարձակվել, ծեծի ենթարկել և պոկել իր պարանոցի շղթան:

Նույն օրը՝ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում, Արսեն Ալեքսանի Մկրտչյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2019 թվականի հունիսի 5-ին, ժամը 18.30-ի սահմաններում Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում, Թաթուլ Կրպեյանի անվան այգում իրեն է մոտեցել մոտ 45 տարեկան մի տղամարդ և ձեռքը մեկնելով պարանոցին կախված ոսկյա շղթային՝ շոշափել է այն, իր այն պահանջին, որ ձեռքը հետ քաշի, անձանոթ տղամարդը հարձակվել է իր վրա, գլխով հարվածել ձախ հոնքի վերին հատվածին, պատճառով մարմնական վնասվածք, որից հետո քաշելով պոկել է 110.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա շղթան՝ իր խաչով և դիմել փախուստի:

Հետապնդելով բռնել է նրան ու հետ վերցրել ոսկյա շղթան՝ իր խաչով: Այդ ընթացքում կատարվածի վերաբերյալ հեռախոսով ահազանգել է ոստիկանություն:

ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 2-րդ վաշտի 2-րդ դասակի ծառայողները Գրիգոր Ազատի Մելքոնյանին /ծնված 16.05.1973 թ./ ժամը 19.00-ին ավազակային հարձակում կատարելու կասկածանքով Թաթուլ Կրպեյանի անվան այգուց բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Դեպքի առթիվ 2019թ.-ի հունիսի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17115019 քրեական գործը:

Դեպքի առթիվ 2019թ.-ի հունիսի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17115019 քրեական գործը, ընդունվել վարույթ և կատարվել է նախաքննություն:

2019 թվականի հունիսի 5-ին ժամը 22:00-ին Գրիգոր Ազատի Մելքոնյանը ձերբակալվել է և ձերբակալման կապակցությամբ վերջինս հայտարարել է, որ ինքը հայերեն լեզվին տիրապետում է ոչ բավարար չափով և ցանկանում է իր շահերի պաշտպանության համար իրեն տրամադրվի հանրային պաշտպան, քանի որ ինքը ֆինանսապես անապահով է:

08.06.2019 թվականին Գրիգոր Ազատի Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել «Քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով»:

25.09.2019թ.-ին քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Գրիգոր Ազատի Մելքոնյանի՝ «Քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու միջնորդությամբ»:

Քրեական գործով անհրաժեշտ է մեղադրյալ /ամբաստանյալ/ Գրիգոր Ազատի Մելքոնյանի տրամադրել դատավարական համակատասխան փաստաթղթեր, սակայն նկատի ունենալով, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է հայերեն բանավոր, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, ուստի նշված դատավարական փաստաթղթերը թարգմանելու համար քրեական գործով անհրաժեշտ է հրավիրել թարգման, որը տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից ռուսերեն և հակառակը:

Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով «Քրեական դատավարության 15-րդ, 53-րդ, 83-րդ և 101-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 17115019 քրեական գործով որպես թարգման հրավիրել Հմայակ Մանվելի Ստեփանյանին/ծնված՝ 13.01.1985թ., անձնագիր՝ 000931923, տրված՝ 05.02.2023թ., 006-ի կողմից/, ով ունի բարձրագույն կրթություն, ռուսերեն լեզվից թարգմանություններ կատարելու փորձ և որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություն, քրեական գործով չհահագրգռված անձ է:

2. Որոշման մասին հայտնել Հմայակ Մանվելի Ստեփանյանին և վերջինիս պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին»:

Վարչական շրջանների դատախազության
ավագ դատախազ, առաջին դասի խորհրդական՝


Մ.Արամյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել են «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին»:

Թարգման՝



ՈՐՈՇՈՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

13 սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Ս.Պողոսյանս, ուսումնասիրելով Սուխարիտ /Սուքարիտ/ Սինգ /Սինգի/ Դխալիվալի (SUKHPREET SINGH DHALI WAL) հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

13.08.2019թ. ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից ձերբակալվել և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ է տեղափոխվել Հնդկաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 307, 148, 149, 427, 212, 216, 120-B հոդվածների և համապատասխան օրենքի 25 և 27 գլուխների հատկանիշներով հանցագործություն կատարելու համար միջազգային հետախուզման մեջ գտնվող Սուխարիտ /Սուքարիտ/ Սինգ /Սինգի/ Դխալիվալը (SUKHPREET SINGH DHALI WAL):

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.08.2019թ. որոշմամբ Ս.Դխալիվալի նկատմամբ կիրառվել է կալանավորում՝ 30 օր ժամկետով:

2019 թվականի սեպտեմբերի 3-ին դիվանագիտական ուղիներով ստացվել է Ս.Դխալիվալին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Հնդկաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Մանիկ Աչարյան համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Սուխարիտ /Սուքարիտ/ Սինգ /Սինգի/ Դխալիվալի (SUKHPREET SINGH DHALI WAL) հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին միջնորդության քննարկման վերաբերյալ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի կայացրած որոշումը հնդկերեն լեզվով թարմանելու (գրավոր թարգմանություն) նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Մանիկ Աչարյանին և նրան ծանոթացնել

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների

դատախազության ավագ դատախազ, արդարադատության

երկրորդ դասի խորհրդական



S. U. Պողոսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի. ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «...13...»... 13.04.2019թ.

Մանիկ Աջարյա

